ԼԵՌՆԵՐԸ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆ

Արցախի ազատության համար մղվող քառամյա պայքարն իր գագաթնակետին է հասնում: Հարցի քաղաքակիրթ լուծման կողմնակից արցախահայությունը կատարեց իր ամենաբախտորոշ քայլը՝ հանրաքվեի միջոցով վճռականորեն ԱՅՈ ասաց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությանը: Այդ պատմական ակտը կատարվեց 1991 թ. դեկտեմբերի 10-ին: Անկախությանը դեմ քվեարկեց... 21 հոգ՛ի: Այսինքն մեր ժողովրդի ղարաբաղյան հատվածը գրեթե հարյուր տոկոսով քվեարկեց ՝ի՛ր ազատության և անկախության օգտին: Այլ կերպ լինել չէր կարող:

ԼՂՀ-ի անկախության հանրաքվեին մասնակցեցին նաև արցախյան գրանցում ունեցող այն ղարաբաղցիները, որոնք իրադարձությունների, դեպքերի բերումով դեկտեմբերի 10-ին Արցախում չէին և գտնվում էին Հայաստանի Հանրապետությունում: Խոսքը նախ և առաջ այն հադրութցիների և բերդաձորցիների մասին է, ովքեր այս տարվա մայիսին ադրբեջանական օմոնի և հատկապես խորհրդային բանակի ուժերով դուրս էին քշվել իրենց դարավոր բնօրրաններից ու տարվել Գորիս: Շրջանային և տեղական իշխանությունների, «Արցախ» հայրենակցական միության լիազոր ներկայացուցիչների եռանդուն աջակցությամբ հանրաքվեի համար տեղամասեր էին ստեղծվել Գորիս քաղաքում, Խնձորեսկ և Տեղ գյուղերում:

Խնձորեսկում հանրաքվեն անցավ գյուղական խորհրդի գործկոմ շենքում: Բրոնեագաթված հադրութցիները կազմակերպված էին, կենտրոնացած: Այդ օրը նոանց (ինչպես և բերդաձորցիների) դեմքերից ասես չքացել էր անլուր զրկանքներից ու տառապանքներից ծնված հոգնածությունը: Ինչպես շատերից լսեցի, բազում գ՛իշերների պես այդ գիշերն էլ նոանք անքուն էին լուսացրել: Եվ պատճառը բոլորովին էլ զանգեզուրյան անսանձ քամին չէր, որ ամբողջ գիշեր ահավոր ոռնոցով «ստուգում էր» շրջանի բնակելի ու մյուս շենքերի ամրությունը: Անքնության պատճառը Լաչինից այն կողմ գտնվող հայրենիքն է, նրա ճակատագիրը կանխորոշող հանրաքվեն: Պատճառը հայրենի լեռներն են, որ անանցանելի՛ դարձած ձորի այն ափից կանչում-հրամայում են... Մարդիկ շատ խորն էին գիտակցում պատմական պահի կարևորությունը և ասես մոռացել էին իրենց կարևեր հոգու մորմոքող վերքերը: Արցախահայությունը, առավել ևս բռնագաթվածները, տառապանքի փորձով գիտեն, որ անկախության հանրաքվեն քաղաքակիրթ ձևով արցախյան հարցը լուծելու վերջ՛ին հույսն է: Եվ մեկ մարդու պես քվեարկեցին ազատ ու մարդավայել ապրելու՝ իրենց սրբազան իրավունքի օգտին, քվեարկեցին կրկին իրենց գյուղերը վերադառնալու, ադրբեջանցիների կողմից պղծված, թալանված, ավերված օջախներին, ՝իրենց ձոր ու հանդին, իրենց աղբյուրներին ու լեռներին կրկին տեր կանգնելու օգտին: Եվ համարյա բոլորն էլ, քվեաթերթիկը քվեատուփ իջեցնելու պահին, իրարից անկախ, աղոթք հիշեցնող նույն բառերն էին մրմնջում.

— Մըեր Ղարաբաղեն հետե մի լուս լուսանա...

Իհարկե, միամտություն կլինի կարծել, թե հանրաքվեն մի հարվածով կլուծի Արցախի հանգույցը: Հենց միայն դեկտեմբերի 10-ին՝ հանրաքվեի օրը, Լեռնային Ղարաբաղում սպանվեց 10 հայ: Գիշեր-ցերեկ հրետակոծվում են ոչ միայն հայկական գյուղերը, այլև՝ Ստեփանակերտը: Հանրաքվեն անցավ գնդակների տարափի տակ: Ադրբեջանի իշխանություններն շտապեցին ԼՂՀ-ի անկախության հանրաքվեն անվանել հակասահմանադրական ու սադրիչ, սպառնացի՛ն բանտ նետել միջազգային իրավունքի նորմերին համապատասխանած հանրաքվեի կազմակերպիչներին: Այս փաստերը կրկին հաստատում են, որ, հիրավի, Ադրբեջանում վերջնականապես թաղվեց է եոբևիցէ դեմոկրատական գործընթացներ սկսելու գաղափարն անգամ:

Մ՛ինչդեռ Արցախը շարունակում է մարտընչել: Զոհեր են տալիս ոչ միայն հայերը; Քիչ չեն նաև ադրբեջանցիների կորուստները: Օրեցօր ահագնացող և իր մասշտաբներով պատերազմ հիշեցնող ընդհարումներ են դրանք՝ հանուն արցախցու ազատագրության և հակառակ կողմի այսպես կոչված պատվախնդրության: Այդպես անվերջ շարունակվել չի կարող: Եթե հարևանների միջև բարեկամություն չկա, գոնե չեզոք խաղաղություն պիտ՛ի հաստատվ՛ի: Քաղաքական երկխոսությունն այլընտրանք չունի:

Անկախության հանրաքվեից անմիջապես հետո ԼՂՀ-ի ղեկավարությունը դիմել է Բելոռուսի, Ռուսաստանի և Ուկրաինայի նախագահներին՝ խնդրելով շուտափույթ քննարկել Արցախ՛ին նորաստեղծ ընկերակցության կազմում ընդունելու հարցը: ԼՂՀ-ի անկախության հանրաքվեի բազմաթիվ դիտորդները դիմել են աշխարհի մի շարք երկրների պառլամենտներին՝ խնդրելով սատար կանգնել արցախահայությանը: Ղարաբաղյան հիմնախնդիրն արդեն արծարծվում է միջազգայ՛ին ատյաններում: Ավելի քան 70 տարի ոտնահարված, մաշչափ բարակած արդարությունը, հուսանք, ի վերջո, կհաղթանակի, և հերոսական, անկոտրում, ազատատենչ ղարաբաղցին կապրի այնպես, ինչպես ինքն է կամենում, ինչպես բոլոր քաղաքակիրթ երկրներում է ընդունված՝ ազատ, ինքնիշխան, բոլորի հետ հաշտ ու համերաշխ, որպես իր հողի և իր բախտի տերը:

Այս վերջին չորս տարիները վկայում են՝ անհնար է ծնկի բերել ազատության համը ճաշակած ժողովրդին: Արցախցին ոտքի է կանգնել իր ամբողջ հասակով: Անհնար է նրան պոկել իր լեռներից: Արցախցին ասես ձուլվել է Մռավին, Քիրսին, Դիզափայտին, Սահունասարին: Իսկ լեռները խոնարհվել չգիտեն... Եվ արցախյան պայքարի այս բախտորոշ փուլում իր վճռական խոսքը պ՛ետի ասի Հայաստանի Հանրապետությունը, որի օրեցօր ամրապնդվող միջազգային հեղինակությունը հաջողության հասնելու ամուր հենարան է:

ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան—Գորիս